Հավելված N 3
ՀՀ կառավարության 2021 թվականի
հոկտեմբերի 28-ի N 1781-Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ կառավարության 2012 թվականի
դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշման

Ձև N 5

Ձ Ա Փ Ո Ր Ո Շ Ի Ձ Ն Ե Ր

ՄԱՐԶԱ-ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ, ԼՈՂԱՎԱԶԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՎՃԱՐԻ ՄԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

1. Մարզա-առողջարարական և սպորտային համալիրների, լողավազանների և այլ սպորտային կազմակերպությունների ծառայություններից օգտվելու վճարի մարման ծառայության շրջանակներում փոխանցում կարող է կատարվել միայն այն մարզա-առողջարարական և սպորտային համալիրներին, լողավազաններին և այլ սպորտային կազմակերպություններին, որոնք ներառված են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում՝ այդ նպատակով հրապարակված համալիրների, լողավազանների և այլ սպորտային կազմակերպությունների ցանկում:

2. Սույն ձևի 1-ին կետով սահմանված ցանկում ներառվում են այն մարզա-առողջարարական և սպորտային համալիրները, լողավազանները և այլ սպորտային կազմակերպությունները, որոնց մատուցած ծառայություններում ներառվում են լողավազան կամ մարզասրահ՝ հագեցված համապատասխան վարժասարքերով:

Ձև N 6

Ձ Ա Փ Ո Ր Ո Շ Ի Ձ Ն Ե Ր

ՊԵՏԱԿԱՆ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՄԲ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ
ԱՄՍԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

1. Սոցփաթեթի շահառուն կամ նրա ընտանիքի անմիջական անդամը (անդամները) իրավունք ունի օգտվելու պետական սուբսիդավորմամբ ուսանողական վարկի ամսական վճարի մարման ծառայությունից:

2. Սույն ձևի 1-ին կետում նշված դեպքում՝ պետական սուբսիդավորմամբ ուսանողական վարկի ամսական վճարի մարման ծառայությունից օգտվող անձն իրավունք ունի իր սոցփաթեթի գումարներից մարել պետական սուբսիդավորմամբ ուսանողական վարկի ինչպես մայր գումարը, այնպես էլ՝ տոկոսագումարները:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

29.10.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ